ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 փետրվարի 2024թ. թիվ 94-Ա

«ԱԼԱՎԵՐԴՈՒ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՍՏԵՓԱՆ ՄՈՍԻՆՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, 68-րդ հոդվածի 6-րդ մասով և 88-րդ հոդվածի 5-րդ մասով, հիմք ընդունելով «Ալավերդու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 8.2. կետի 17-րդ ենթակետը, 2021թ. հունիսի 23-ին ՀՀ Լոռու մարզպետի և Ստեփան Մոսինյանի միջև կնքված պայմանագրի 5-րդ կետի 5.1 ենթակետի «դ» պարբերությունը և ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի կանոնադրության 20-րդ կետը, ինչպես նաև «Ալավերդու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության բաժնետիրոջ արտահերթ ընդհանուր ժողովի 2024 թվականի փետրվարի 22-ի թիվ 1 արձանագրությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի «Ալավերդու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Ստեփան Վլադիմիրի Մոսինյանին 2024 թվականի փետրվարի 22-ից ազատել զբաղեցրած պաշտոնից՝ լուծելով նրա հետ 2021 թվականի հունիսի 23-ին կնքված աշխատանքային պայմանագիրը և վճարել մեկ ամսվա վարձատրությանը համարժեք փոխհատուցում:

2. «Ալավերդու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պարտականությունները վերապահել «Ալավերդու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության ամբուլատոր պոլիկլինիկական մասի վարիչ Լորա Նորայրի Սարգսյանին:

3. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն վարչական ակտը ստորագրվելուց հետո եռօրյա ժամկետում ծանուցել հասցեատիրոջը առձեռն կամ պատվիրված փոստով՝ ստանալու մասին ծանուցմամբ:

22/02/2024

X

ԱՐԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂԱՋԱՐՅԱՆ

2024թ. փետրվարի 22

ք.Վանաձոր